

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ.

Միջազգային փորձի ուսումնասիրություն

Սերբիայի օրինակով





Նյութը կազմել է Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտի կամավոր, հետազոտող Մարիամ Եվդոկիմովան:

Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտում Մարիամի աշխատանքը սկսվել է «Ստեղծարար տնտեսության մեջ երիտասարդների զբաղվածության ներուժը և զարգացման հեռանկարները» հետազոտությունից, որտեղ նա աշխատում էր որպես տվյալների մուտքագրող: Այս աշխատանքից բացի Մարիամի հետ համագործակցության այլ շրջանակներ ևս ի հայտ եկան: Նույն հետազոտության շրջանակներում նա համատեղեց իր դիպլոմային աշխատանքն ու Ինստիտուտի կողմից իրականացվող հետազոտությունը, արդյունքում նույն հետազոտության շրջանակներում դարձավ **«Սկսնակ ձեռնարկությունների էկոհամակարգի առանձնահատկությունները»** թեմայով հոդվածի հեղինակ: Նրա շնորհիվ նաև Ինստիտուտում սկիզբ է առել “ContactStudent” նախաձեռնությունը, որի նպատակն է ուսանողներին կապել իրենց պոտենցիալ գործատուների հետ նրանց ավարտական աշխատանքերի համատեղ կազմակերպման միջոցով: Այժմ Մարիամը մագիստրոսական կրթություն է ստանում ԵՊՀ-ի «Տվյալների գիտությունը բիզնեսում» բաժնում:

Մինչ այդ նա որպես բարձրագույն կրթության ուսանող-փորձագետ աշխատել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնում»: Մարիամն ակտիվ է ոչ ֆորմալ կրթության ոլորտում: Հետաքրքիր է տարբեր իրադարձությունների շրջանակներում Մարիամի հետ համագործակցելը, նրա կրեատիվ գաղափարներն ու փորձը կիսելը: Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտի զարգացման ռազմավարությունը մշակելիս մեզ աջակցել է նաև Մարիամը:

Այսպիսով՝ Մարիամի հետ տարբեր շրջանակներում կիսում ենք հետաքրքրություններ և գաղափարներ, իսկ նա մեզ հետ կիսում է երիտասարդներին ներգրավելու հետաքրքիր փորձը:

Ներկայացնում ենք Մարիամի կողմից մշակված ևս մեկ աշխատանք՝ Սերբիայի երիտասարդության մասին օրենքի ուսումնասիրությունը:

Երիտասարդական քաղաքականության իրականացման հիմքերը Սերբիայում

Սերբիայում Երիտասարդության մասին օրենքի հիմքում ընկած է մինչ օրենքի ընդունումն իրականացված Երիտասարդական ազգային ռազմավարությունը: Այն նաև պետական երիտասարդական քաղաքականության իրականացման հիմնարար փաստաթուղթ է Սերբիայում: Ըստ այդմ երիտասարդական քաղաքականությունը Սերբիայում հիմնվում է 3 հիմնարար իրավական փաստաթղթերի վրա՝ **Ազգային երիտասարդական ռազմավարություն, Ազգային երիտասարդական գործողությունների ծրագիր և Երիտասարդության մասին օրենք:**

Ազգային երիտասարդական ռազմավարությունը հանդիսանում է երիտասարդական քաղաքականության կարևորագույն փաստաթուղթ, որն ընդունվել է տարբեր շահագրգիռ կողմերի կարիքների ուսումնասիրության արդյունքում: Այն նպաստել է նաև երիտասարդական տեղական կառույցների ցանցի ստեղծմանը և Երիտասարդության մասին օրենքի մշակմանն ու ընդունմանը:

Ազգային երիտասարդական գործողությունների ծրագրի նպատակն է աջակցել Երիտասարդական ազգային ռազմավարությանը՝ տրամադրելով ճանապարհային քարտեզ հասնելու վերջինիս նպակատներին¹:

¹ [Youth Policy Review Series: Youth and Public Policy in Serbia, 2014, էջ 53 - 70](#)



Երիտասարդության մասին օրենքը Սերբիայում

Ընդհանուր նկարագրություն

<i>Սերբիայի բնակչություն²</i>	7,111,024
<i>15 – 29 տարեկան³</i>	1,322,201 (21.07%)
<i>Գրագիտության մակարդակ</i>	98.8%
<i>Գործազրկության մակարդակ⁴</i>	47.1% (15 – 24 տ. համար)

Երիտասարդների կյանքի վրա ազդող հիմնական գործոնները Սերբիայում՝

- Տեղեկատվության հասանելիություն,

² https://www.indexmundi.com/serbia/demographics_profile.html

³ [Tomanović Y., Stanojević D. Young People in Serbia 2015: Situation, perception, beliefs and aspirations](#), էջ 9

⁴ [Tomanović Y., Stanojević D. Young People in Serbia 2015: Situation, perception, beliefs and aspirations](#), էջ 11

- Զբաղվածություն,
- Կրթություն,
- Առողջություն,
- Ազատ ժամանցի կազմակերպում,
- Առողջություն,
- Մոբիլություն և միգրացիա,
- Հանցագործություն և բռնություն:

Երիտասարդության մասին օրենքը բաղկացած է 7 գլխից և 29 հոդվածներից:

Առաջին գլխում նկարագրվում է օրենքի կարգավորման առարկան և նպատակը, երիտասարդական քաղաքականության և երիտասարդական ոլորտի առանձնահատկությունները, հիմնական սկզբունքները:

Հիմնական Սահմանումներ

Երիտասարդներ (*Young people*) – 15 - 30 տարեկան անձինք:

Երիտասարդական քաղաքականություն (*Youth Policy*) – պետական մարմինների, հաստատությունների, ասոցիացիաների և այլ դերակատարների գործունեությունը, որը կապված է երիտասարդների կարգավիճակի բարելավման և խթանման հետ:

Երիտասարդական քաղաքականության դերակատար (*Youth policy actor*) – Սերբիայի Հանրապետությունը, ինքնավար մարզը և ՏԻՄ-երը որպես երիտասարդական քաղաքականության համակարգողներ, հաստատությունները, ասոցիացիաները որպես երիտասարդական գործունեություն իրականացնողներ և այլ կառույցներ, որոնք մասնակցում են Երիտասարդական Քաղաքականության իրականացմանը:

Երիտասարդական գործունեություն (*Youth activity*) – երիտասարդների կամ երիտասարդական քաղաքականության դերակատարների կողմից կազմակերպված ցանկացած երիտասարդական ոլորտի գործունեություն, որն ուղղված է բարելավելու երիտասարդների դիրքը և նրանց մասնակցությունը հասարակության մեջ:

Երիտասարդական աշխատանք (*Youth work*) – երիտասարդական գործողություններ են կազմակերպված երիտասարդների կողմից և վերջիններիս համար, հիմնված ոչ ֆորմալ կրթության վրա և կազմակերպվող նրանց ազատ ժամանակի ընթացքում՝ հետապնդելով նպատակ բարելավել երիտասարդների անձնային և սոցիալական զարգացման պայմանները՝ համաձայն նրանց պահանջների և կարողությունների՝ պահպանելով կամավորական մասնակցության սկզբունքը:

Օրենքի հիմքում ընկած են հետևյալ 6 սկզբունքները՝

- Երիտասարդներին աջակցության սկզբունք,
- Խտրականության բացառման սկզբունք,
- Հավասար հնարավորությունների սկզբունք,
- Երիտասարդության և նրանց սոցիալական դերի կարևորության մասին իրազեկվածության բարձրացման սկզբունք,

- Երիտասարդների ակտիվ մասնակցության սկզբունք,
- Երիտասարդների պատասխանատվության սկզբունք:

Երիտասարդության մասին օրենքը անմիջապես կապված է Ազգային երիտասարդական ռազմավարության հետ, հետևաբար օրենքի երկրորդ գլուխը անդրադառնում է ռազմավարության ընդհանուր դրույթներին: Ռազմավարությունը մշակող կողմերն են Սերբիայի Երիտասարդության և սպորտի նախարարությունը, մյուս նախարարությունները: Նրանցից յուրաքանչյուրը պատասխանատու է երիտասարդական ոլորտում իրականացվող համապատասխան ենթաոլորտում իրականացվող ծրագրերի կամ գործողությունների համար: Այս գլխում սահմանվում է ռազմավարության տևողությունը, ֆինասավորման ուղիները: Վերջինս պետք է ամրագրված լինի Սերբիայի Հանրապետության, ինքնավար մարզի, ՏԻՄ-երի բյուջեներում:

Օրենքի երրորդ գլխում ներկայացվում են երիտասարդական միջոցառումներն իրականացնող կառույցները, մասնավորապես՝ երիտասարդական ասոցիացիաները և ֆեդերացիաները:

Երիտասարդական ասոցիացիաները պետական ռեգիստրում գրանցված միավորումներ են, որտեղ անդամների առնվազն 2/3 կազմում են երիտասարդները և գործունեությունն ուղղված է դեպի երիտասարդները: Երիտասարդական ասոցիացիաներ կարող են հանդիսանալ նաև այն կազմակերպությունները, որոնց գործունեությունն ուղղված է ոչ միայն երիտասարդները, սակայն դա հանդիսանում է առաջնահերթություն:

Բոլոր գրանցված երիտասարդական ասոցիացիաները կարող են ընդհանուր նպատակների ու շահերի համար ստեղծել ֆեդերացիաներ և համատեղ գործունեությունն ուղղել դեպի երիտասարդներ:

Համաձայն օրենքի չորրորդ գլխի Սերբիայի Կառավարությունը պետք է ստեղծի Երիտասարդական խորհուրդ, որը հանդիսանում է խորհրդատվական մարմին, որի շնորհիվ երիտասարդական քաղաքականության մշակումն ու իրականացումը համակարգված է: Երիտասարդական խորհուրդները կարող են լինել նաև ՏԻՄ-երին կից:

Ըստ օրենքի հինգերորդ գլխի երիտասարդական ոլորտում ծրագրերի և նախագծերի իրականացման համար ֆինանսավորումը պետք է արտացոլվի Սերբիայի Հանրապետության բյուջեում և օգտագործվի հետևյալ նպատակների համար՝

- Ստեղծել պայմաններ երիտասարդական միջոցառումների մշակման և իրականացման համար՝ ապահովելով երիտասարդների ակտիվ մասնակցությունը սոցիալական գործընթացներում,
- Խրախուսել երիտասարդական ասոցիացիաներին և ֆեդերացիաներին մասնակցել Ազգային երիտասարդական ռազմավարության նպատակների և երիտասարդական միջոցառումների իրականացմանը,

- Տեղեկացնել երիտասարդներին երիտասարդության վերաբերյալ կարևոր խնդիրների մասին,
- Խրախուսել երիտասարդների մասնագիտական կարիերայի աճը և կազմակերպել սեմինարներ, դասընթացներ և միջոցառումներ զբաղվածության և ձեռնարկատիրության վերաբերյալ,
- Խրախուսել ոչ ֆորմալ կրթությունը երիտասարդական ոլորտում և ստեղծել որակյալ ոչ ֆորմալ կրթության համակարգ,
- Կամավորության և երիտասարդական կազմակերպությունների կարողությունների զարգացման միջոցով նպաստել երիտասարդների սոցիալական հզորացմանը,
- Խթանել երիտասարդների ակտիվ և որակյալ ազատ ժամանակի անցկացումը,
- Խթանել առողջ ապրելակերպը:

Ծրագրերը կարող են ամբողջությամբ ֆինանսավորվել կամ համաֆինանսավորվել և իրականացվել երիտասարդական ասոցիացիաների, ֆեդերացիաների, ՏԻՄ-երի, գիտական և հետազոտական ինստիտուտների, կազմակերպությունների կողմից, որոնք իրավաբանորեն գրանցված են Սերբիայի Հանրապետությունում:

Համաձայն օրենքի վեցերորդ գլխի օրենքի իրականացման մշտադիտարկման համար պատասխանատու է Երիտասարդության և սպորտի նախարարությունը: Օրենքի յոթերորդ գլխում նկարագրված են անցումային և եզրափակիչ դրույթները:

Երիտասարդության և սպորտի նախարարություն

Մշակում, բարելավում և իրականացնում է երիտասարդական քաղաքականությունը, դուրս է բերում լուծումներ երիտասարդական հիմնախնդիրների համար:

Ազգային երիտասարդական խորհուրդ

Միջգերատեսչական համակարգող, որը համապատասխանեցնում է տարբեր պետական կառույցների գործողությունները կապված երիտասարդական քաղաքականության մշակման և իրականման հետ:

Մարզային երիտասարդական խորհուրդներ

Համակարգում և խթանում են տեղական երիտասարդական քաղաքականության մշակումը, ինչպես նաև համակարգում են տեղական կառույցների աշխատանքը:

Տեղական երիտասարդական գրասենյակներ

Միջգերատեսչական համակարգող մարմիններ, որոնք ապահովում են տեղական գործողությունների ծրագրերի դրույթների համապատասխանությունը պետականորեն ընդունված օրենքներին:

Երիտասարդական հետազոտությունների իրականացնող կազմակերպություն

Իրականացնում են երիտասարդաան քաղաքականությանը և երիտասարդության հիմնախնդիրներին վերաբերող ուսումնասիրություններ:

Երիտասարդական ասոցիացիաներ, ֆեդերացիաներ
Քաղաքացիական Հասարակական Կազմակերպություններ

Օգտագործված գրականություն

1. Contribution of non-programme countries to EU youth wiki chapter I - Serbia: youth policy governance, 2017, 18 p.
2. [Zakon on mladima \(Youth Law of Serbia\) 2011.08.09, 2015, 11 p.](#)
3. Reviews on youth policies and youth work in the countries of south east Europe, Eastern Europe & Caucasus, 2011, 41 p.
4. [National Youth Strategy 2015 – 2025, Ministry of Youth and Sports of Serbia, 76 p.](#)
5. [Tomanović Y., Stanojević D., Young People in Serbia 2015: Situation, perception, beliefs and aspirations, 146 p.](#)
6. Youth Policy Review Series: Youth and Public Policy in Serbia, 2014, 188 p.

